

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 16
վիճակագրության պետական խորհրդի նիստի

09.11.2009թ.

ժ.11: 00

Մասնակցում էին՝

Ս.Մնացականյան (*խորհրդի նախագահ*), Գ. Անանյան, Գ.Գևորգյան, Յու.Պողոսյան, Ա.Շաբոյան, Ս.Գավթյան, Ա.Աղազարյան (*խորհրդի անդամներ*)

Հ. Գրիգորյան (*խորհրդի քարտուղար*)

Հրավիրված էին՝ Լ.Միրզոյան (ՀՀ ԱՎԾ նախագահի տեղակալ), Ա. Հայրապետյան (աշխատակազմի ղեկավար), Գ.Մուրադյան (իրավաբանական բաժնի առաջատար մասնագետ), Լ. Պետրոսյան (վիճակագրական աշխատանքների մեթոդաբանության և դասակարգիչների բաժնի պետ), Ա.Սաֆյան (միջազգային վիճակագրական համագործակցության բաժնի պետ), Ա. Պետրոսյան (վճարային հաշվեկշռի և արտաքին առևտրի վիճակագրության բաժնի պետ), Գ. Խաչատրյան (բիզնես ռեգիստրի բաժնի գլխավոր մասնագետ):

Օրակարգի նախագծում՝ հինգ հարց.

1. «Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության աշխատակազմ պետական կառավարչական հիմնարկին հանձնվող գույքի կազմը և չափը հաստատելու մասին» հարցը:

/Չեկուցող՝ Ա.Հայրապետյան/

2. «Վիճակագրության համար տարածքային միավորների Հայաստանի Հանրապետության դասակարգչի նախագծի մասին» հարցը:

/Չեկուցող՝ Ա. Աղազարյան/

3. «Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայությանն առընթեր գիտամեթոդաբանական խորհրդի անդամների անհատական կազմը հաստատելու և Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2008 թվականի դեկտեմբերի 24-ի թիվ 45-Ա որոշումը մասնակի ուժը կորցրած ճանաչելու մասին» հարցը:

/Չեկուցող՝ Լ. Պետրոսյան/

4. Հաղորդում արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին.

4.1. Հաղորդում Լյուքսեմբուրգում 04-08.10.2009թ.տեղի ունեցած «UNECE-ի արևելյան տարածաշրջանի բիզնես ռեգիստրները և դրանց դերը բիզնես վիճակագրությունում» թեմայով աշխատանքային հանդիպմանը և «Բիզնես ռեգիստրները» թեմայով սեմինարին մասնակցելու վերաբերյալ:

/Չեկուցողներ՝ Գ. Խաչատրյան/

4.2. Հաղորդում Ավստրիայի Վիեննա քաղաքում 05.10-16.10.2009թ. տեղի ունեցած Արժույթի միջազգային հիմնադրամի (ԱՄՀ) կողմից կազմակերպված «Վճարային հաշվեկշռի և միջազգային ներդրումային դիրքի վիճակագրություն» թեմայով ուսումնական դասընթացին մասնակցելու վերաբերյալ:

/Չեկուցող՝ Ա. Պետրոսյան/

5. Այլ հարցեր:

ՀՀ վիճակագրության պետական խորհրդի նախագահի կողմից ներկայացվեց խորհրդի նիստի օրակարգի նախագիծը, որը հաստատվեց ամբողջությամբ և միաձայն:

/Բովետարկության արդյունքները-կողմ՝ 7, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

Լսեցին՝

1. «Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության աշխատակազմ պետական կառավարչական հիմնարկին հանձնվող գույքի կազմը և չափը հաստատելու մասին» հարցը:

/Չեկուցող՝ Ա.Հայրապետյան/

Որոշեցին՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության աշխատակազմ պետական կառավարչական հիմնարկին հանձնվող գույքի կազմը և չափը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրը:

/Անհատական/

/Բովետարկության արդյունքները- կողմ՝ 7, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

Լսեցին՝

2. «Վիճակագրության համար տարածքային միավորների Հայաստանի Հանրապետության դասակարգչի նախագծի մասին» հարցը:

/Զեկուցող՝ Ա. Աղազարյան/

Որոշեցին՝

1. Հավանություն տալ «Վիճակագրության համար տարածքային միավորների Հայաստանի Հանրապետության դասակարգչի» նախագծին՝ համաձայն հավելվածի:

2. Առաջարկել Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության նախագահին ապահովել «Վիճակագրության համար տարածքային միավորների Հայաստանի Հանրապետության դասակարգչի» նախագիծը, շահագրգիռ պետական մարմիններին կարծիքի ներկայացնելու գործընթացի իրականացումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

/Անհատական/

/Բվեարկության արդյունքները- կողմ՝ 7, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

3. «Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայությանն առընթեր գիտամեթոդաբանական խորհրդի անդամների անհատական կազմը հաստատելու և Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2008 թվականի դեկտեմբերի 24-ի թիվ 45-Ա որոշումը մասնակի ուժը կորցրած ճանաչելու մասին» հարցը:

/Զեկուցող՝ Լ. Պետրոսյան/

Որոշեցին՝

1. Հաստատել ՀՀ ազգային վիճակագրական ծառայությանն առընթեր գիտամեթոդաբանական խորհրդի անդամների անհատական կազմը՝ համաձայն հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2008 թվականի դեկտեմբերի 24-ի թիվ 45-Ա որոշման 1-ին կետը:

/Անհատական/

/Բվեարկության արդյունքները- կողմ՝ 7, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

4. Հաղորդում արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին.

4.1. Հաղորդում Լյուքսեմբուրգում 04-08.10.2009թ.տեղի ունեցած «UNECE-ի արևելյան տարածաշրջանի բիզնես ռեգիստրները և դրանց դերը բիզնես վիճակագրությունում» թեմայով աշխատանքային հանդիպմանը և «Բիզնես ռեգիստրները» թեմայով սեմինարին մասնակցելու վերաբերյալ:

/Զեկուցողներ՝ Գ. Խաչատրյան/

4.2. Հաղորդում Ավստրիայի Վիեննա քաղաքում 05.10-16.10.2009թ. տեղի ունեցած Արժույթի միջազգային հիմնադրամի (ԱՄՀ) կողմից կազմակերպված «Վճարային հաշվեկշռի և միջազգային ներդրումային դիրքի վիճակագրություն» թեմայով ուսումնական դասընթացին մասնակցելու վերաբերյալ:

/Զեկուցող՝ Ա. Պետրոսյան/

Որոշեցին՝

արտասահմանյան գործուղումների հաշվետվության մասին հաղորդումներն ընդունել ի գիտություն

/Անհատական/

/Բվեարկության արդյունքները- կողմ՝ 7, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

ՆԱԽԱԳԱՀ

Ս. ՄՆԱՅԱԿԱՆՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ

Հ. ԳՐԻԳՈՐՅԱՆ